

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Ս. Թարգմանչաց Վարժարանի Մանկապարտեզի բաժնի հանդէսը տեղի ունեցաւ Շաբաթ, 31 Մայիս 2003ին, ժառանգաւորաց Վարժարանի հանդիսասարահին մէջ, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Ներկայ էին միաբան հայրեր, ծնողներ եւ հրաւիրեալներ:

Տիկ. Ալին Պոյանեանի բացման խօսքէն ետք փոփոխութիւնները սահուն առողջանութեամբ արտասանեցին, ներդաշնակօրէն երգեցին եւ պարեցին դաշնակի ընկերակցութեամբ Օր. Սուգաննա Միրզոյեանի:

Տիկ. Այրին Էօրտէքեանի առաջնորդութեամբ ծաղիկ դասարանի աշակերտները ստացան Մանկապարտեզի իրենց վկայականները Պատրիարք Սրբազան Հօրմէն:

Վարժարանի Տեսուչ Տ. Թէոդորոս Արղ. Զափարեան շնորհակալութիւն յայտնեց ուսուցչուհիներուն կազմակերպուած յայտագիրին համար: Ապա Պատրիարք Սրբազան Հայրը յայտնեց իր գոհունակութիւնը եւ հանդէսը փակեց «Պահպահիչ»ով եւ «Հայր Մեր»ով, տալով Իր օրհնութիւնը:

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի բաժնի Ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ Շաբաթ երեկոյեան, 7 Յունիս, ժառանգաւորաց Վարժարանի հանդիսասարահին մէջ, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր եւ ներկայութեամբ Միաբանութեան, ծնողներու, հրաւիրեալներու եւ հետաքրքրասէրներու:

Հանդէսի բացումը կատարեց դպրոցի Տեսուչ՝ Տ. Թէոդորոս Արղ. Զափարեան՝ ամփոփ կերպով տալով 2002-2003 ուսումնական տարեշրջանի գործունէութիւնը: Մշակութային բաժնի պատասխանատու Տոփշրջանի գործունէութիւնը: Մշակութային բաժնի պատասխանատու Տոփշրջանի նազգաշեանի պատրաստութեամբ Երկրորդական Վարժարանի Անուշ Նազգաշեանի պատրաստութեամբ Երկրորդական Վարժարանի տասներկու շրջանաւարտները ներկայացան կոկիկ յայտագիրով մը՝ արտասանութեամբ, դաշնակով, մենբերգով եւ խմբերգով, իսկ ուղերձներով ալ իրենց զգացումները եւ երախտագիտութիւնը յայտնեցին Վարժարանիս հովանաւոր Պատրիարք Սրբազան Հօր, տեսչութեան, ուսուցչական կազմին եւ ծնողներուն՝ հայրերէն, անգլերէն, արաբերէն, եբրայերէն եւ ֆրանսերէն լեզուներով:

Մանկապարտեզի Ծաղիկ դասարանի ներմակագգեստ շրջանաւարտները կարմիր մեխակներով բեմ բարձրացան եւ շնորհաւորեցին Երկրորդականի շրջանաւարտները:

Պատրիարք Սրբազան Հայրը եւ Տնօրէն Տիար Եղիա Տիգրանեան բեմ հրաւիրուեցան, եւ շրջանաւարտները ստացան իրենց մրցանակներն եւ վկայականները: Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց շրջանաւարտները, մաղթելով յաջողութիւն ապագայ տարիներուն եւ տուաւ իր Հայրական օրհնութիւնը:

Հ.Ե.Մ., Հ.Օ.Մ., Հ.Մ.Ը.Մ. և Ե.Հ.Բ.Մ. Միութիւններու ատենապետները միասնական կազմակերպութեամբ բեմ հրաւիրուեցան և նուէրներով շնորհաւորեցին շրջանաւարտները: Այնուհետեւ իրենց պատրաստած նոյս հիւրասիրութեամբը պատուասիրեցին ներկաները, առիթ տալով մօտէն շնորհաւորելու օրուան երիտասարդ ընթացաւարտները:

Կիրակի երեկոյեան, 8 Յունիս 2003ին, տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամալներջի հանդէսը վարժարանի փոքր սրահին մէջ, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Ժառանգաւորաց Վարժարանի աւարտական դասարանի երեք սաներ հանդէս եկան երբայերէն, անգլերէն և արաբերէն ուղերձներով, իսկ Ընծայարանի շրջանաւարտ Յովնան Սրկ. Բաղդասարեան՝ աւարտական ուղերձով:

Յայտագրի մաս կը կազմէին ԺՎ-ի սաներու կողմէ արտասանութիւն և հոգեւոր և հայրենասիրական խմբերգներ՝ ղեկավարութեամբ Տէր և Տիկին Վալերի և Տատիանա Փիրումեաններու, ինչպէս նաեւ կատարումներ դաշնակի վրայ:

Վարժարանի տեսուչ՝ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երեցեան վարելով յայտագիրը, իր հերթին ներկայացուց տարեկան 2002-2003 տեղեկատուութիւնը, որմէ ետք տեղի ունեցաւ վկայականներու բաշխումը: Մրցանակաբաշխութիւնը կատարուեցաւ համաձայն իւրաքանչիւր դասարանէն աշակերտին ապահոված Առաջին և Երկրորդ բարձրագոյն նիշին: Պարգեւատրուեցան նաեւ բարի վարուց և նշդապահութեան մէջ օրինակելի աշակերտները: Փակման և գնահատանքի խօսքերով Պատրիարք Սրբազան Հայրը օրհնեց արդիւնապէտ ջանքերը տեսչութեան և ուսուցիչներուն:

Սուրբ Աթոռոյս օրհներգի երգեցողութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, հրաւիրեալ միաբան հայրերու, ուսուցչական կազմի և հանրութեան մասնակցութեամբ:

Ի. Ս.